

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԿԿՈՂՄԱՆԻ «ԿՈՒՅՐ» ԳՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ (DOUBLE-BLIND PEER REVIEW GUIDELINE)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուղեցույցը սահմանում է «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Ակադեմիա) «Հանրային կառավարում» գիտական հանդեսում (այսուհետ՝ Հանդես) հրապարակվելիք բնագրերի երկկողմանի «կույր» գրախոսման ընթացակարգը:

2. Սույն ուղեցույցի մշակման հիմքն են Elsevier («Էլսևիեր») ակադեմիական հրատարակչական ընկերության կողմից մշակված մոտեցումները որոնք միջազգայնորեն համընդունելի են բոլոր հրատարակողների կողմից:

3. Ներկայացվող հոդվածների բնագրերի գրախոսումն իրականացվում է առնվազն երկու անկախ գրախոսի կողմից:

4. Հանդեսում ընդունված է գրախոսման կազմակերպման երկկողմանի կույր տարբերակը (և՛ գրախոսները, և՛ հեղինակներն անանուն են): Գրախոսի կողմից հեղինակի ինքնության բացահայտումն անհնար է:

5. Բնագիրը պետք է ներկայացվի երկու օրինակով/ֆայլով: Առաջինը պետք է պարունակի տեղեկություն հեղինակ(ներ)ի մասին («չկուրացված» բնագիր), իսկ երկրորդ՝ «կուրացված» օրինակը, հեղինակ(ներ)ի մասին որևէ տեղեկություն չպետք է պարունակի:

2. «ՉԿՈՒՐԱՑՎԱԾ» ԲՆԱԳՐԻ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ

6. «Չկուրացված» բնագրի տիտղոսաթերթում նշվում են՝
- 1) հեղինակ(ներ)ի ազգանունը, անունը, հայրանվան սկզբնատառը,
 - 2) այն հաստատություն(ներ)ը, որը(որոնք) ներկայացնում են հեղինակները,
 - 3) այն հեղինակի հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն, որի հետ անհրաժեշտության դեպքում պետք է կապ հաստատել:

3. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿՕԳՆԵՆ ՊԱՏՐԱՍԵԼՈՒ «ԿՈՒՐԱՑՎԱԾ» ԲՆԱԳԻՐԸ

7. Բնագիրը երկկողմանի «կույր» գրախոսման ներկայացնելուց առաջ անհրաժեշտ է բնագրի երկրորդ օրինակից հեռացնել հեղինակների տվյալները:

8. Բնագրի երկրորդ օրինակի երկկողմանի «կույր» գրախոսության պատրաստման

համար անհրաժեշտ քայլերն են.

1) եթե տեքստում կան հղումներ հեղինակ(ներ)ի նախկին աշխատանքներին, ապա առաջին դեմքով ներկայացված արտահայտությունները պետք է փոխարինել երրորդ դեմքով: Օրինակ՝ «Ինչպես մենք ցույց ենք տվել նախկինում ... [ազգանունը, 2007 թ.]» արտահայտությունն անհրաժեշտ է փոխարինել «Նախկինում ցույց է տրվել ... [անանուն, 2007 թ.]» արտահայտությամբ, իսկ անգլերեն հղումը՝ [Anonymous, 2007],

2) տեքստում հեղինակ(ներ)ի հրապարակումներին ուղղված հղումները պետք է ներկայացնել հետևյալ կերպ. «... [անանուն, 2007 թ.]» կամ «[Anonymous, 2007]»,

3) գրականության ցանկում հեղինակ(ներ)ի աշխատանքներին արված հղումներում նշվում է միայն «... [անանուն, 2007 թ.]» կամ «[Anonymous, 2007]», մանրամասները բաց են թողնվում,

4) տեքստից հեռացվում են հետազոտությունը ֆինանսավորած աղբյուրների վերաբերյալ հղումները,

5) տեքստում չեն ներառվում շնորհակալական արտահայտություններ: